ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ս. Էջմիածնի միաբան Հ. Սահակ Վ. Ամատունին պատրաստել է քաւառաբառերի մի ընդարձակ բառարան, բազմաթիւ մեկնութիւններով և օրինակներով։ Աշխատութիւնը բոլորովին աւարտուած է, ներկայացնում է լեզուագիտական հետաքրքրութիւն և պարունակում է մեծ պաշար հայ լեզուի ուսումնասիրութեան համար։

—Հանդ. Ղուկասեանի յարգելի կտակակատարներն այս օրերս արդէն յանձնեցին Վանքի եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն ցանձնաժողովին՝ թանգարանին կտակուած քսանուհինգ հազար ռուբլին անցեալ տարիների բոլոր տոկոսիքներով, որից յետոյ թանգարանը կսկսէ արդէն իւր գործունէութիւնը։

—Մինխէնի համալսարանի փիլիսոփայութեան կանդիդատ՝ մեր աշխատակից պ. Յովհ. Բողիեան՝ Գերմանիայից վերադառնալով՝ այս օրերս ուղևորուեց իւր հայրենիք Շուշի, ուսումնասիրելու տեղական աղէտի մանրամասնութիւնները։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

«Լումայ» ամսագրի յարգելի խմբագրութեան.

Գրեթէ մի ամբողջ տարի «Մշակ» օրաթերթի մէջ յաճախակի անարգական նամակներ ու հեռագրեր են լոյս տեսնում Բեսարաբիոյ թեմի Սրբազան Առաջնորդի դէմ. Առիթն այդ ստայօդ գրուածքների Թէոդոսիոյ Հերթեցեանց քահանան է, թէ և այդ գրուածքները մերթ «90 ստորագրութիւն, մերթ՝ Մխիթարեան, մերթ՝ Բաստամեան» ստորագրութիւններն են կրում. սպասում էինք թէ ինքը՝ Թէոդոսիայի ժողովուրդը, Սրբազան Սինօդը, որոնց գործի ամբողջ ընթացքը յայտնի է, ափեղցփեղ զրպարտութիւններից կմաքրեն Սրբազան Ներսէս Արք-Եպիսկոպոսին, որ իւր անձնուէր ժողովրդասիրութեան համար միայն շնորհակալութեան է արժանի։ Սակայն նրանց լռութիւնը մի կողմից, ինչ որ Բաստամեանի մի անարգ նամակը միւս կողմից (տես «Մշակ» № 100) բարոյապէս ստիպում են մեզ առայժմ հակիրճ պատասխան տալ զրպարտիչներին։

Լեղուագար տէրտէրն ու համանիշ պարոնները աշխարհ են լցնում թէ՝ Ներսէս Հերթևցեանը անմաս քահանայ է, ժողովրդասէր է, հէնց այդ բարեմասնութիւնների համար հալածւում է և այլն և այնուհետև դալիս են մատացածին մեղադրանքներ Ս. Առաջնորդի հասցէին.

Շատերից միայն մի քանի փաստեր շարենք այստեղ, որոնք բաւական կլինին իբրև պատասխան անբարեմիտ մարդկանց։

1. Մինչդէ իր № 487 Ապրիլ 12-ի հրամանով գրում է Բեսարաբիոյ Կոնսիստորիային թէ՝ որովհետև Թէոդոսիոյ քաղաքի ծխականք «բազմաստորագիր հեռագրաւ թախանձին հեռացուցանել զՆերսէս քահանայն Հերթևցեանց ի քաղաքէն, զհներալ-նահանգապետն կամի հեռացուցանել զքահանայն ի պատճառս վնասակարութեան... ուստի՝ նախ՝ պատուիրէ թէ մակալ Առաջնորդի հեռացուցանել զքահանայն Ներսէս) և այլն։ Ուրեմն Հերթևցեանին տանել չէն կարողանում Թէոդոսիայի ժողովուրդը, Առաջնորդը և Նահանգապետը։ Հապա՞ում համար է Հերթևցեանը։

2. Հերթևցեանը իւրացրել է Լուգանսկի համայնքի Աղօթատան զանգերի համար հաւաքած՝ 192 բուբ.

3. Հերթևցեանը իւրացրել է հեռաւոր արևելքում վիրաւորուած զինուորների անունով հանգանակած «Կարմիր խաչի» 100 բուբ»։

4. Հերթևցեանը իւրացրել է Եալթայի եկեղեցու 500 բուբլին։

5. Հերթևցեանը իւրացրել է Թէոդոսիոյ հայ կանանցից հաւաքած մի գումար յանուն Բարեգործական ընկերութեան։

6. Հերթևցեանը թակել է տուել ժողովրդի ընտրեալ և հաստատուած երեսփոխանին իւր ազգականի ձեռքով։

7. Հերթևցեանի նոյն ազգականը մեղադրուած է սպանութեան փորձի մէջ Սիմֆերոպոլի Օգեստոիոս աւագ քահանայի վրայ, որին հրամայուած էր քննել Երեսփոխին թակելու դէպքը։

8. Հերթևցեանը օրինական Երեսփոխին դուրս է վռնտել և իր կողմից եկեղեցու բանալիներն յանձնել իր նշանակած Երեսփոխանին, իրենից կանոնադրութիւն և գործունէութեան նոր հրահանգ տալով նրա ձեռը։

9. Հերթևցեանը առանց իշխանութեան արտօնութեան, ծածկում է կամիլաւկա։

10. Հերթևցեանը եկեղեցու համար գնում է և օծում է

խաչեր, պատկերներ առանց ժողովրդի, առանց իշխանութեան, առանց որև է հաշուետուութեան։

11. Հերթեցեանը իր իշխանութիւնը ճանաչել չուզելով իր գլխից վեր յարաբերութեան մէջ է մտնում Նահանգապետի և այլ պետական հաստատութեանց հետ։

12. Հերթեցեանը տաճարի բեմից սպառնալիքներ է շռայլում իր ծխականներից շատերին, հրապարակապէս զրկելով մէկին հաղորդուելու, միւսին՝ թաղելու, մի ուրիշին մի այլ հոգևոր մխիթարութիւնից։

13. Քննութիւնը պարզեց և պարզում է դեռ, որ Հերթեցեանի Էջմիածին զրկել տուած հեռագրների և թղթերի տակ եղած ստորագրութիւնների շատերը կեղծ են, «ПОДЛОГЪ» շատերը մի տան մի քանի անդամների անուններն են կրում և այլն։

14. Հերթեցեանը կատարել է և մի շարք ծանր յանցանքներ, որոնք քննական գործի մէջը կան ու շարունակում են քննուիլ, բայց խղճում ենք, այդ գլուխը կորցրած քահանային որ չենք դնում այստեղ։

15. Սուտ է թէ Սրբազան Առաջնորդը առանց Վեհափառ Կաթողիկոսի հաճութեան Նահանգապետի միջոցով քշել է տուել նրան Էջմիածին։ Վեհի Դիւանապետը հերքեց այդ սուտը։ Նրան Վեհարանից հրամայուած էր գնալ Էջմիածին, բայց չէր գնում։ Հայրապետի հեռագրով դադարեցուած էր քահանայագործելուց, բայց շարունակում էր իր պաշտօնը։

16. Սուտ է թէ երկրորդ անգամ Ս. Առաջնորդը Նահանգապետով է քշել Նրան Թէոդոսիայից։ Ճշմարտութիւնն այս է՝ Թէոդոսիոյ Գեներալ-Նահանգապետը դիմում է արել Վեհին Երևանի Նահանգապետի միջոցով և պահանջել է, որ Հերթեցեանին, որին մօտ խոստովանելու և հաղորդուելու չի կարող զրկել հայ զինուորներին, հեռացնեն, այլապէս ինքը կ՚քշի։ Այս թղթի պատճէնը Գեներալ-Նահանգապետը զրկել է Ս. Առաջնորդին տեղեկութեան և աջակցութեան համար։ Միւս կողմից էլ Սինոդը դիմել է Առաջնորդին որ Հերթեցեանին հեռացնէ խակոյն Թէոդոսիայից, Սրբազանը հեռագրել է Հերթեցեանին հեռանալ և իր կարգադրութեան մասին միայն տեղեկացրել է Նահանգապետին, որ սա ինքը գիտենայ և իր կողմից կարգադրութիւն չանի։

17. Սուտ է թէ Հերթեցեանն անմեղ է, քանի որ նա Էջմիածնից հեռագրով «մեղայ է գոչել» Սրբազան Առաջնորդին իր անլուր չարիքների համար։

18. Սուտ է թէ՝ Թէոդոսիոյ ժողովուրդը, ի բաց առեալ մի քանի հոգուց, ուզում են Հերթեցեանն քահանային, ահա ժողովրդի բազմաստորագիր հեռագրներից մի կտորը, որ ուղարկուած է եղել Սինոդ Զատիկից առաջ, երբ Սինոդը խաբուելով Հերթեցեանի ֆոքուսներից նրան վերադարձրաւ Զատիկին Թէոդոսիա։ «Այս տարի մեզ համար Քրիստոսը յարութիւն չի առնելու, այս տարի մեզ համար Զատիկ չկայ, էջմիածինը Զատիկական տօնին վճիռ արաւ աւազակ Բարբաբային արձակել մեզ և ժողովրդին խաչ հանել... Եւ յիրաւի թէ և Զատիկին Հերթեցեանը Թէոդոսիայում պատարագ արաւ, բայց ժողովրդի երեք քարորդը ոչ ժամ է գնացել, ոչ հաղորդուել և ոչ տնօրհնէք ընդունել կարծեցեալ ժողովրդասէր քահանային։

Այսքանը բաւական է առ այժմ իբրև հերքումն Հերթեցեանի և իւր հոմանիշ պարոնների զրպարտութեան։ Եթէ նոքա կ'շարունակեն իրենց բանսարկութիւնները, Կոնսիստորիան ստիպուած կլինի գործերից կազմել և հրատարակել մի գրքոյկ Հերթեցեանի հաստատիր? արժանիքների մասին, ինչ որ պիտի չցանկանայ Հերթեցեանը եթէ խոհեմ լինի։

Ինչ վերաբերում է Բաստամեան պարոնին անպատկառութեան, ասելիք չունինք, «Ոճն ինքը մարդն է» ասում է ֆրանսիական առածը։

Նախանդամ վիճակային Կոնսիստորիայի Հայոց

Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Բենիկ Վարդապետ

Անդամք { Բարսեղ ա. քահ. Թազանճեանց
Սարգիս քահ. Թաթուլեանց

Ատենադպիր՝ Կ. Ցովհաննէսեանց

30 Մայիսի 1906 թ.

Քիշնև։

Ց. Գ. Խնդրում ենք արդոյ խմբագրութեանդ՝ յանուն ճշմարտութեան տպագրել մեր այս նամակը Ձեր թերթի մօտիկ համարներից մէկում։ Նոյնք։

II

Թիֆլիս 10 յունիս

Ցարգոյ խմբագիր

Երբ որ միտք յղացուեց հրատարակել «Շարք պատմագրաց Հայոց» ընդարձակ գործը՝ առաջին արձագանք տուողներ

այդ համակրելի գործի հրատարակութեան եղաւ Գեր. Սուքիաս արքեպս. Գարգեանը, որ անմիջապէս իւր սեպհականութիւնից 6000 ռուբլի նուիրեց այդ գործի առաջին հատորի տպագրութեան համար և փոխադրեց Թիֆլիս հրատարակիչներից մէկի՝ պ. Ս. Մալխասեանցի անունով։

Որքան մեզ յայտնի է, սրբազանը մի քանի պայմաններ էր դրել հրատարակիչներին. նախ՝ որ ամբողջ գործի տպագրութիւնը պէտք է հանձնուէր՝ Էջմիածնի հրատարակութիւն՝ բազմաթիւ պատճառներով և երկրորդ, որ ա. հատորի վաճառումից գոյացած ծախքով երկրորդը տպուէր և այսպէս շարունակաբար մինչև վերջ։

Այդ գործի հրատարակութիւնը սկսուել է 4-5 տարի առաջ և, ինչպէս տեսնում ենք մեր ձեռքը գտնուած տպագրուած մի գրքոյկից, մինչև այժմ տպուել է միայն առաջին հատորի չորրորդ գիրքը, որի վերայ ոչ գրուած է թէ Էջմիածնի հրատարակութիւն է և ոչ էլ թէ՝ Սուքիաս արքեպիսկոպոսի ծախքով է տպուում։

Բացի սորանից՝ առաջին ամբողջ հատորը կարծեօք տրպուած պէտք է լինէր հայոց տառերի գիւտի յօբելինին, որպիսի զանցառութիւնները անշուշտ մեծ ցաւ պիտի լինի սրբ. նուիրատուի սրտին։

Արդ՝ հարցնում ենք՝ ինչ իրաւունքով կամայական գործածութիւն է տուած օտարի սեպհականութեան, ինչ իրաւունք է ղլանալ Էջմիածնի միաբանի հրատարակութեան վերայ դնել «Էջմիածնի հրատարակութիւն» բառերը, ինչ իրաւունք ղլանալ նոյն իսկ յիշել վրէն՝ թէ տպուում է Սուքիաս արքեպիսկոպոս Գարգեանի ծախքով և ինչ իրաւունքով՝ 4-5 տարում տպում են միայն առաջին հատորի 4 թէ 8 (հաստատ չգիտենք) գրքերից միմիայն մի գիրքը. այդպէս շարունակելով՝ ամբողջ ա.-հատորը պիտի վերջանայ մօտ 20 տարում, իսկ բոլոր հատորները միասին մօտ 100 տարում։ Այս ինչ բարեխղճութիւն է։

Վ. Ա.